

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՈՎԱԿԱՆ

«Վանատուր. բանասիրական յօդուածներու ժողովանոյ»
Երուսաղէմ, 1993, 415 էջ

Լրացաւ Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքի միաբան Նորայր Արքեպիսկոպոս Ծովականի (Պողարեան) ծննդեան 90-ամեակը: Հայ բանասիրութեան երախտաւորը հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրութիւնների, այդ թրւում, սրբոց Յակոբեանց վանքի ձեռագրերի տասնմէկհատորանոց «Մայր ցուցակի», որ հրատարակուել է 1966—1991 թթ.: Գիտնականի յորելեանի նախօրէին լոյս տեսաւ նրա բանասիրական հաւաքածոն՝ «Վանատուրը», որի նիւթերից շատերը ժամանակին տպագրուել են պարբերական մամուլում եւ այսօր, ինչպէս ինքն է գրում՝ «դիւրամատչելի չէին հայ բանասէրներուն»: Այստեղ քննարկում են Ե-Ժէ դարերի մատենագրութեան մեծ ու փոքր դէմքերի, երեւոյթների հետ աղետոսող ամենաբազմազան խնդիրներ:

Ե դարի մշակութային կեանքը ներկայացնող յօդուածները շօշափում են թարգմանական գրականութիւնը, տարբեր պատմիչների երկերի մէջ հանդիպող ընդհանուր տեղիները, սրբագրութիւններ նրանց երկերում, ժամանակագրական ճշգրտումներ: «Կորիւնի ժամանակագրական վերջաբանը» յօդուածն արծարծում է յոյժ կարեւոր հարցեր՝ երբ է կրօնաւորուել Մեսրոպ Մաշտոցը, եւ երբ է հիմնադրուել հայ դպրութիւնը: Հիմնաւորելով իր այդ դրոյթը, թէ Յագկերտի որդի Վռամի թագաւորութեան տարիները դուրս են մնացել Կորիւնի բնագրից, ուստի եւ նրա խօսքի մէջ գոյացել է անհամաձայնութիւն, Ն. Ծովականն առաջարկում է «Վարք Մաշտոցի» մէջ կատարել բնագրային ճշգրտում: «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամբ քառասուն եւ հինգ, եւ ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան Սրբոյն ամբ երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Կրմանայ պարսից արքայի ամս վեց, եւ Յագկերտի ամս քսան եւ մի, եւ Վռամայ ամս քսան եւ մի, եւ յառաջնումն ամի երկրորդ Յագկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին»: Մատենագրի խօսքի մէջ ծագած հակասութիւնը սրբագրելով, յաւելելով ընդգծուած բառերը, հետազօտողը ստուգապէս յայտնի փաստերի համադրութեամբ եզրակացնում է, թէ 404-ը ճշգրիտ թուականն է հայ գրերի գիւտի:

Ս. Յակոբեանց վանքի ճառընտիրներից մէկում Նորայր Սրբազանը գտել է մի ընդարձակ հատուած, որ հնարաւորութիւն է տալիս վերականգնելու Փարպեցու Պատմութեան բնագրի ակնյայտօրէն աղճատուած տեղիներ, երբեմն հաստատելու հրատարակիչների ինչ-ինչ կռահումներ եւ ենթադրութիւններ, մերժելու ուրիշները: 1904-ի քննական հրատարակութեան մէջ, օրինակ՝ կարդում ենք. «... եղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն»: Բանասէրներ նկատել են, որ սխալ ընթերցուած է՝ **երգողական տառիցն**, եւ Հ. Կ. Տէր-Սահակեանն առաջարկել է վերջին ընդգծուած բառը սրբագրել՝ **տառիցն**: Մերժելով այս առաջարկութիւնը՝ Հ. Գ. Նահապետեանը ենթադրել է, որ Ղազար Փարպեցին **երգողական տառ** ասելով նկատի ունի քերթողական արուեստը: Ծառընտիրը տալիս է ճիշտ ընթերցումը, եւ ուսումնասիրողն իրաւամբ նկատում է, թէ Պատմութեան՝ Բաղէշեան ձեռագիրն ունի «հմուտք երգողական», ուր ընդգծուած Գիմը սովորական գրչական աղաւաղումով փոխարինել է Դ-ին, իսկ Գ-ն միացել է նախորդ բառին: Կասկածից վեր է, որ

նորայայտ բնագիրը պահպանել է ճիշտ ընթերցումը՝ հմուտ քերթողական տառիցն:

Ձ դարի հայ գրականութեան կարեւոր դէմք է Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսը, որի ժառանգութեան վերաբերեալ մեր ծանօթութիւնները ցաւալիօրէն աղքատ ու աղճատ են: Ն. Մովսկանն, ահա, հրապարակել է «Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի առ Սուրբն Յիզատիբուզիտ յորժամ ի բանդի էր ի Դունի» գողտրիկ բնագիրը, միւս կողմից նկատելով, որ Հանգստեան եւ Մարտիրոսաց շարականները չփոթութեամբ են վերագրուել Պետրոս Գետադարձին, հաւանական է համարում, որ դրանց հեղինակը նոյնպէս Սիւնեաց եպիսկոպոսն է:

Արժէ անդրադառնալ եւս մի հրապարակման: Մխիթար Այրիվանեցին հաղորդում է՝ որ Սահակդուխտ Սիւնեցին յօրինել է բազում տաղեր, մեղեդիներ, «կցուրդս ծննդեան եւ փոխմանն»: Ն. Մովսկանը 1951-ին գտաւ եւ «Հասկ» հանդէսում հրատարակեց Սանդուխտի ծննդեան կցուրդը, որ բանաստեղծուհու՝ մեզ յայտնի միակ գործն է մինչեւ օրս: Եւ այժմ՝ Երուսաղէմի թթ. 2431 եւ 1741 ձեռագրերից քաղելով, նա շրջանառութեան մէջ է դնում «կցուրդ փոխման Աստուածածնի» (սկ. «Այսաւր բազմութիւնք առաքելոց») բնագիրը:

Ս. Յակոբեանց վանքի գետնայարկից հանուած մի գրեթէ աննշան քարաբեկորի (մարմար) վրայ պահպանուել են վանեցի, ջուղայեցի, բաղիշեցի ուխտաւորների անուններ: Ն. Մովսկանը հրատարակելով մեծապէս վնասուած այս արձանագրութեան վերծանութիւնը՝ պարզում է, որ յիշատակուող մեծահարուստները 1611 թ. են եղել Երուսաղէմ՝ ս. Յակոբեանց վանքի պարտքերը մարելու նպատակով: Այդ առիթով հեղինակը բերում է տեղեկութիւններ Սարգիս գրչի յիշատակարանից, Սիմէոն Դպիր Լեհացու «Ուղեգրութիւնից»: Իրար լրացնող ու հաստատող փաստերի դիտարկմամբ բանասէրը ապացուցում է դրանց վստահելիութիւնը եւ եզրակացնում, որ մարմարէ յուշարձանը կանգնեցուել է «չուրջ 1611-ին, ս. Յակոբեանց վանքին պարտքերէ ազատումը իրագործող պատուական բարերաններու յիշատակին»:

Կարեւոր ճշգրտումներ կան Շարականների հեղինակների կապակցութեամբ: Եթէ Պետրոս Գետադարձին վերագրուած Հանգստեան եւ Մարտիրոսաց շարականները հետազօտողն ընծայում է Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսին, ապա Համօրէն նշեցելոց կանոնի 17 պատկերները վերագրում է «յետնագոյն գրողներու»:

Ընթերցողը բանասիրական ու պատմագիտական արժէքաւոր դիտողութիւններ կր գտնի Մովսէս Խորենացուն, Յովհան Մայրավանեցուն, Ստեփանոս Սիւնեցուն, Թովմա Արծրունուն, Գէորգ Սկեւռացուն, Բուրթէլ Օրբէլեանին, Գրիգոր Շղթայակիր պատրիարքին եւ շատ ուրիշների նուիրուած յօդուածներում, ուր յատուկ ուշադրութեան առարկայ է Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքի մատենադարանի ձեռագրերի բերած նպաստը հայ մատենագրութեան: Իսկ այդ ձեռագրերի ամենաարդիւնաշատ հետազօտողը Նորայր Արքեպիսկոպոս Մովսկանն է: Փոքրածաւալ, լակոնիկ ոճով հիւսած յօդուածների ներկայ ժողովածուն մի տեսակ հանրագումարի է բերում նրա տարիների վաստակը բնագրագիտութեան ասպարէզում: Սակայն ուրախալի է, որ ծերունագարդ հեղինակը այսօր եւս շարունակում է իր օգտակար աշխատանքը ի շահ հայագիտութեան: